ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> դեկտեմբերի 2016 թվականի N:593-Ա **ք.Գյումրի**

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՓՈՂՈՑԻ 9/4 ՇԵՆՔԻ N 8 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տրդատ Ճարտարապետ 9/4 շենքի՝ որպես պետական սեփականություն անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2004 թվականի հունիսի 30-ի N455375 վկայականը, Գյումրի քաղաքում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված բնակելի շենքերի բնակարանները վիճակահանությամբ բաշխման գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 6-ի արձանագրությունը և Գյումրու քաղաքապետարանի կողմից 2000 թվականի սեպտեմբերի 30-ին տրված <<Բնակվելու թույլտվությունը>>, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N1935-Ն որոշման 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով՝ աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված Տրդատ Ճարտարապետ փողոցի 9/4 շենքի N 8 չորս սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ.

Հարությունյան Մարինե Երջանիկի,

Հարությունյան Գևորգ Գալուստի,

Հարությունյան Օֆելյա Գալուստի,

Հարությունյան Սյուզաննա Գալուստի,

Աբրամյան Օֆիկ Անդրանիկի:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է